ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի անվանումը

Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի թվով 6 շենքերի տանիքների վերակառուցման ,մուտքերի դռների փոխարինման,միջանցքների վերանորոգման,ճաղավանդակների փոխարինման, բակային տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ

Ծրագրի հիմնավորման անհրաժեշտությունը

Մեղրաձոր բնակավայրը հանդիսանում է ռոյալթի վճարած կազմակերպությունների, մասնավորապես՝ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր: Բնակավայրը ներառում է թվով 6 բազմաբնակարան շենք, որոնք կառուցվել են դեռևս 1970-ական թվականներին: Տասնամյակների ընթացքում շենքերը ենթարկվել են բնական մաշվածության, ինչը ստեղծել է մի շարք խնդիրներ՝

- **Տանիքների վատթար վիճակ** – շենքերի տանիքները կառուցված են ազբեստից, որոնք տեղ-տեղ փոխարինվել են թիթեղով, սակայն փայտյա կառուցվածքային մասերում առկա են կոտրված հատվածներ:
- **Ջրահեռացման համակարգի բացակայություն** – շենքերի պատերը խոնավանում են, ինչը հանգեցնում է պատերի քայքայման և բորբոսի առաջացման:
- **Անբավարար ջերմամեկուսացում** – միջանցքի պատուհանները և մուտքի դռները փայտյա են, ինչը չի ապահովում անհրաժեշտ ջերմամեկուսացում, հանգեցնելով բնակարանների սառեցման և ջերմային կորուստների:
- **Ավտանգության խնդիրներ** – աստիճանների վնասված հատվածները և ճաղավանդակների թուլացումը կարող են հանգեցնել դժբախտ պատահարների:
- **Բակերի ոչ բարեկարգ վիճակ** – բակերը հողային են, առանց ասֆալտապատման կամ սալարկման, ինչը դժվարեցնում է տեղաշարժը և մեքենաների կայանումը:

Վերոնշյալ խնդիրները վտանգ են ներկայացնում բնակիչների առողջության և անվտանգության համար, ինչպես նաև խոչընդոտում են Մեղրաձոր բնակավայրի զարգացմանը:

Ծրագրի համապատասխանությունը պետական ռազմավարություններին

Ծրագիրն ուղղակիորեն համահունչ է **ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված** պահանջներին, մասնավորապես՝

1-ին կետի 6-րդ ենթակետի՝ «Քաղաքաշինություն» ուղղությանը

2-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «Քաղաքաշինական նշանակության ծրագրեր» պարբերություններին՝

- **ա) Բնակարանային ֆոնդի,վարչական օբյեկտների հիմնանորոգում, կառուցում և վերանորոգում**
- **բ) Բակերի բարեկարգում**

Այս ծրագիրը ներառված է նաև համայնքի **2022-2026 թթ. հնգամյա զարգացման ծրագրում**, որտեղ հանրային քննարկումների արդյունքում ճանաչվել է որպես առաջնահերթություն:

Ծրագրի ազդեցությունը

- Բնակելի պայմանների էական բարելավում
- Էներգաարդյունավետության և ջերմամեկուսացման ապահովում
- Հասարակական անվտանգության բարձրացում
- Բնակարանային ֆոնդի պահպանություն և արժեքի աճ
- Համայնքի գրավչության մեծացում ներդրողների համար

Շենքերի սպասարկումը կիրականացվի «Արծափ» ՀՈԱԿ-ի կողմից:

Ծրագրի իրականացումը կնպաստի ոչ միայն բնակիչների կյանքի որակի բարձրացմանը, այլև համայնքային ենթակառուցվածքների երկարաժամկետ կայուն զարգացմանը:

Աշխատակազմի քարտուղար՝ **Գարիկ Բաղալյան**